Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Ազատագրական պայքարը Սյունիքում և Արցախում 1720-ական թվականներին

Ուսուցիչ՝ Արուսյակ Մարգարյան

Ղեկավար՝ Ռուզաննա Բարսեղյան

Եղեգնաձոր 2022թ.

Բովանդակություն

Ներածություն ----------էջ 3-4

Գլուխ 1. **Գլուխ 1.Ազատագրական պայքարը Արցախում/1722-1730թթ./**

1. Ռուսական զորքերի Կասպիական արշավանքը և հայ-վրացական համագործակցությունը

2.Հայկական զորոմիավորումների/սղնախների/ստեղծումը Արցախում

3.Թուրքական արշավանքները Արևելյան Հայաստան:Երևանի և Արցախի հերոսամարտերը ---------- էջ 5-8

Գլուխ2.Ազատագրական պայքարը Սյունիքում:Դավիթ Բեկ:Մխիթար Սպարապետ

----------էջ 9-12

Եզրակացություն ----------էջ 13

Գրականության ցանկ ----------էջ 14

Մի օր հայությունը պետք է ների թուրքերին, բայց ոչ թե նրանց առջև ծնկի իջած, այլ նրանց ծնկի իջեցրած :

Գարեգին Նժդեհ

Ներածություն

Ճիշտ է ասված, որ պատմությունը ժողովրդի հավաքական հիշողությունն է, նրա կենսագրությունը: Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Գալով հազարամյակների խորքերից՝ հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ: Շարունակելով իր պատմական ուղին՝ ժամանակների ու դարերի անբաժան ուղեկից հայ ժողովուրդը հերոսական դիմադրությունների շնորհիվ հասել է մինչև մեր օրերը:

Այդ հերոսական դիմադրությունների վառ օրինակ է Սյունիքի և Արցախի 1720-ական թվականների ազատագրական պայքարը:

Հայկական Սյունիքն ու Արցախը, որոնք այսօր էլ բարդ վիճակում են հայտնվել ռազմաքաղաքական առումով, Հայոց պատմության ողջ ընթացքում Հայաստանի ու Հայկական լեռնաշխարհի ողնաշարն են եղել: Այդ ողնաշարը երբեմն մասամբ կոտրվել է, բայց հայ ժողովրդի ուղեղն ու գիտակցությունն արթուն են մնացել: Դրա ամենավառ վկայությունն այն փաստն է, որ միջնադարյան ժամանակաշրջանում՝ հայկական թագավորությունների անկումից հետո, Սյունիքն ու Արցախը ինքնավար կարգավիճակ պահպանած հայկական քիչ երկրամասերից են: Հենց նրանք ուղիղ 300 տարի առաջ՝ 1720-ական թթ., բարձրացրեցին Հայաստանի ազատագրության դրոշը Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի, Ավան Հարյուրապետի, Եսայի Հասան-Ջալալյանի և այլոց գլխավորությամբ:

Մենք այսօր էլ այդպիսի վիճակում ենք գտնվում՝ մեր ողնաշարը կոտրված է, բայց մեր ուղեղը, մեր արյան շրջանառությունը շատ լավ աշխատում է, և մենք շեշտը պիտի դնենք այդ ուղեղի և գիտակցության վրա, որպեսզի կարողանանք այսօրվա իրավիճակից դուրս գալ:

Գտնում եմ անհրաժեշտություն,որ այդ հարցերը առավել քան արդիական են այսօր և անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը սևեռել այս թեմային և զուգահեռներ տանել Սյունիքի և Արցախի ազատագրական պայքարի և մերօրյա իրադարձությունների միջև:Աշակերտների մոտ բարձրացնել ազգային արժանապատվության ,անկախության ու պետականության կարևորությունը ազգապահպանման գործում,նրանց մեջ վերականգնել հավատը սեփական ուժերի ու հայրենիքի նկատմամբ:

Հայաստանը հայտնվել է ոչ միայն խաչվող ուղիների ճանապարհի կենտրոնում,այլև միջազգային շահերի բախվող կիզակետում:

Այս հետազոտական աշխատանքով նպատակ ունեմ վեր հանել այս երկու ժամանակաշրջանների նմանությունները,ցույց տալ,որ Աստվածաշնչում հիշատակված դրախտը ինչպես անցյալում,այնպես էլ այսօր իր վրա է սևեռում ոչ միայն տարածաշրջանի ուժեղներին,այլև միջազգային հզոր խաղացողներին:

Գլուխ 1.Ազատագրական պայքարը Արցախում/1722-1730թթ./

<<Ամեն գեղ բերթ ա...>>

Իվան Կարապետ

1.Ռուսական զորքերի Կասպիական արշավանքը և հայ-վրացական համագործակցությունը

18-րդ դարի սկզբներից ուժեղացան ազատագրական շարժումները Հայաստանում ու Վրաստանում:Հայ ազատագրական շարժման օջախներ դարձան Արցախը և Սյունիքը:Այդ շարժմանը մեծ լիցք հաղորդեց այն,որ Պետրոս 1-ինը,1721թ.հաղթականորեն ավարտելով պատերազմը Շվեդիայի հետ,հաջորդ տարի՝1722թ.,Անդրկովկասը նվաճելու նպատակով,կազմակերպեց Կասպիական

արշավանքը:Մինչ այդ ռուսական հզորացող պետությունը,լուծելով իր համար կենսական նշանակություն ունեցող մի շարք տարածքային-քաղաքական հիմնահարցեր,սկսեց գործուն հետաքրքրություն ու շահագրգռվածություն ցուցաբերել Անդրկովկասի և Պարսկաստանի հանդեպ:

1715թ. Պարսկաստան ուղևորվեց Ա.Վոլինսկու գլխավորած դեսպանությունը:Դեսպանությանը հանձնարարված էր ուսումնասիրել Պարսկաստանի ճանապարհները,Անդրկովկասի ժողովուրդների ու հատկապես հայերի վերաբերմունքը դեպի ռուսները,որպեսզի նախապատրաստվեր ռուսական ապագա Կասպիական արշավանքը:Ռուսական զորքերը Կասպից ծովով մտան Դեբենդ ու Բաքու:Հայերն ու վրացիները ոգևորությամբ ընդունեցին ռուսների մուտքը:

Արցախի ազատագրական շարժման ղեկավար,Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը և վրաց թագավոր Վախթանգ 6-րդ-ը հայ-վրացական համատեղ պայքարի ծրագիր մշակեցին:Նրանք որոշեցին մեկտեղել ուժերը և շարժվել դեպի Շամախի՝ռուսական բանակին ընդառաջ:1722թ.սեպտեմբերին Գանձակի Չոլակ կոչվող վայրում հայ- վրացական զինված ուժերը/30հազարանոց վրացական և 10 հազարանոց հայկական զորամասեր/հուզիչ պայմաններում հանդիպում են՝ ռուսական զորքերին միանալու համար: Բայց քաղաքական ու նյութատեխնիկական մի շարք աննպաստ հանգամանքների պատճառով Պետրոս 1-ը ընդհատում է արշավանքը և վերադարնում Ռուսաստան:Վախթանգ թագավորը և Եսայի կաթողիկոսը այդ տխուր լուրը ստանալով վերադարձան իրենց բնակավայրերը և այս պայմաններում ապստամբեցին պարսկական տիրապետության դեմ:

2.Հայկական զորոմիավորումների/սղնախների/ստեղծումը Արցախում

Քաղաքական խառնաշփոթից օգտվելով՝ լեզգիներն իրենց հերթին ասպատակում էին Շիրվանի և Արցախի բնակավայրերը:Այդ հարձակումներին դիմագրավելու համար Արցախի մելիքների զինված ջոկատները հաճախ միավորվում էին և միասնաբար դիմադրում թշնամուն:Ազատագրական պայքարին օժանդակելու համար Շիրվանի հայկական բնակավայրերից Արցախ ժամանեցին նաև ռազմական գործի հմուտ կազմակերպիչներ Ավան և Թարխան հարյուրապետներն իրենց համախոհներով:Արցախում կազմակերպվեցին հենակետային ամրոցներ՝սղնախներ:Դրանցից առավել հայտնի էին Գյուլիստանի,Շոշի, Ավետարանոց,Ջրաբերդի և Քարագլխի սղնախները:

3.Թուրքական արշավանքները Արևելյան Հայաստան:Երևանի և Արցախի հերոսամարտերը:

Պարսկաստանի թուլացումն ու մասնատումը,Ռուսաստանի հետաքրքրությունը Անդրկովկասի նկատմամբ իրենց վրա բևեռեցին Օսմանյան Թուրքիայի ուշադրությունը:Թուրքիան ուշի-ուշով հետևում էր տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին և պատրաստվում էր Անդրկովկասն ու Ատրպատականը գրավելու իր հին ծրագրերի իրականացմանը:

Ռուսաստանին կանխելու նպատակով 1723 թ. հունիսին թուրքական բանակը ներխուժում է Թիֆլիս,գրավում քաղաքը և շարժվում դեպի Գանձակ:Վախթանգ 6-րդ հեռանում է Թիֆլիսից և անցնում Ռուսաստան:

Անդրկովկասի ու Պարսկաստանի համար պայքարի ելած Ռուսաստանի ու Թուրքիայի միջև մրցակցությունը կարող էր վերաճել ռուս-թուրքական նոր պատերազմի,որից,սակայն, նրանք երկուստեք խուսափում էին:Երկար բանակցություններից,և փոխադարձ մեղադրանքներից հետո՝1724թ. հունիսի 12-ին,Կ.Պոլսում ի վերջո կնքվեց պայմանագիր:

Այդ պայմանագրի համաձայն Թուրքիան ճանաչում էր Ռուսաստանի տիրապետությունը Կասպից ծովի առափնյա շրջաններում,իսկ Ռուսաստանը՝ Թուրքիայի իրավունքները Հայաստանի,Վրաստանի,Ատրպատականի,Գանձակի և Անդրկովկասում Պարսկաստանին ենթակա մյուս տարածքների նկատմամբ:Հայ ազատագրական շարժման գործիչները երկար ժամանակ անտեղյակ մնալով այս պայմանագրին՝ շարունակում էին հուսալ և սպասել Ռուսաստանիկ օգնությանը:

Ռուս-թուրքական պայմանագրի կնքումից անմիջապես հետո թուրքերը անցան լայնածավալ հարձակման:1724թ հունիսի վերջին նրանց 30 հազարանոց բանակը մտավ Արարատյան դաշտ և շարժվեց Երևան:Թուրքերի համար անսպասելի համառ դիմադրություն ցույց տվեց Կարբի գյուղի բնակչությունը:Շուրջ 40 օր տևեց Կարբիի պաշտպանությունը:Գյուղացիները համաձայնում էին զենքը ցած դնել միայն այն պայմանով,որ թշնամու բանակը չմտնի Կարբի:

Հունիսի 7-ից թուրքական բանակը արդեն շրջապատել էր Երևանը:Քաղաքի պաշտպանությունը իր վրա էր վերցրել հայ բնակչությունը:Ինքնապաշտպանական ուժերը ,որ հաշվում էին 10 հազար մարդ,Հովհաննես Հուդիբեկյանի,Պողոս Քեչիբեկյանի և այլոց գլխավորությամբ 3 ամիս շարունակ հետ են մղել թուրքական

բանակի գրոհները:Քաղաքն այլևս չէր կարող դիմանալ պաշարմանը,որովհետև սպառվում էին պարենը և զինամթերքը:Երևանի խանը ստիպված էր համաձայնել բանակցություններ վարելու թուրքերի հետ: 1724 թ. սեպտեմբերի 26-ին պաշարված քաղաքն անձնատուր եղավ:Թուրքերը միայն մեծ զոհերի գնով կարողացան գրավել Երևանը:Թուրքական բանակը կորցրեց ավելի քան 20 հազար զինվոր:Երևանի պաշտպանությունը հայ ժողովրդի հերոսական էջերից է:

Երևանի գրավումից հետո թուրքերը հարձակվում են Սյունիքի և Արցախի վրա:Ծանր վիճակ է ստեղծվում հայկական երկու ինքնավար իշխանությունների համար:Օգնության ոչ մի հույս չկար:Հայերը օգնության խնդրանքով,դիմում են ռուսական ցարին,բայց ապարդյուն:

1725թ.փետրվարին թուրքական 6 հազարանոց զորաջոկատը մտնում է Արցախի Վարանդայի շրջան:Հայերը խորամանկության դիմելով նրանց տեղավորում են 33 հայկական գյուղերում և գիշերային հանկարծակի գրոհով ոչնչացրին նրանց:

1725-1726թթ. ընթացքում թուրքերը 4 անգամ ևս հարձակվեցին Արցախի վրա և զգալի կորուստներ կրելով հետ նահանջեցին:Ի վերջո, դրսից օգնություն չստանալով,ապստամբները հուսահատվեցին:Սյունիքի հետ միասին կազմալուծվեց նաև արցախյան պայքարը:1728թ.մահանում է Եսայի Հասան-Ջալալյանը,որը,տեղեկանալով ռուս-թուրքական պայմանագրի կնքման մասին,հակվել էր թուրքերի հետ հաշտվելու մտքին:

Արցախի ազատագրական շարժումը մեծ արձագանք գտավ ողջ հայության մեջ:Այն ոգեշնչում էր նաև հայ ժողովրդի հաջորդ սերունդներին և հավատով լցնում իրենց ուժերի նկատմամբ:

Գլուխ2.Ազատագրական պայքարը Սյունիքում:Դավիթ Բեկ:Մխիթար Սպարապետ

18-րդ դարի 20-ական թվականների սկզբներին ազատագրական շարժումներ են սկսվում նաև Սյունիքում:Հարկ է նշել,որ Սյունիքի և Արցախի միջև կային մի շարք էական տարբերություններ՝Արցախի բնակչությունը միատարր էր,իսկ Սյունիքում մեծ թիվ էին կազմում իսլամադավանները:Արցախում ձևավորվել էին 40 հազարանոց հայկական կանոնավոր բանակ,Սյունիքում այդպիսի ռազմական ուժ չկար:

Զանգեզուրում ազատագրական շարժումը կազմակերպելու և վրաց ազատագրական ուժերի հետ կապեր հաստատելու նպատակով Սյունիքի մելիքների ու տանուտերերի հանձնարարությամբ հայ առևտրական Ստեփանոս Շահումյանը մեկնում է Թբիլիսի և բանակցում վրաց արքայորդի Շահնավազի հետ: Նրա խնդրանքով Քարթլի-Կախեթի թագավոր Վախթանգ VI-ը 1722 թվականին Սյունիք է ուղարկում մի քանի հայ զորավարներ: 30 հոգանոց զորականների ջոկատը, որոնց շարքում առավել հայտնին Դավիթ Բեկն էր, հաստատվեցին Շինուհայր ավանում և իրենց շուրջը համախմբեցին տեղի զինված ուժերը: Դավիթ Բեկի ստեղծում է ռազմական խորհուրդ, աչքի ընկած զորականներից Մխիթարին նշանակում զորքերի սպարապետ, իսկ Տեր-Ավետիսին, Փարսադանին, Թորոսին, Ավթանդիլին, Բայանդուրին և ուրիշներին տալիս զորաջոկատի հրամանատարի կոչում:

Նույն տարվա աշնանը Դավիթ Բեկը պարտության մատնեց կարաչոռլու և ջևանշիր քոչվոր ցեղերին: Վաչկատուն ցեղերի անասուններն ու ունեցվածքը բաժանվեց հայ գյուղացիներին: Զորավարի հեղինակությունը աճեց: Ապա գրավվում է Տաթևի մոտ գտնվող ամրոցը, որը պատկանում էր Իսլամ ընդունած մելիք Բաղրին: Դավիթ Բեկը մելիքին բերում է Շինուհայր և հրամայում եկեղեցում բոլորի ներկայությամբ տասներկու օր բարձրաձայն ասել. ***«Լո՛ւյս Լուսավորչի հավատին, վայ ուրացողին»:*** Այնուհետև հրամայում է կտրել նրա գլուխը, իսկ ինքը գալիս և հաստատվում է Տաթևում: Մելիքի ունեցվածքը բաժանվում է զինվորներին ու գյուղացիներին: Հայ բնակչությունը ոտքի է կանգնում նաև երբեմնի Սյունիքի թագավորության մայրաքաղաք Կապանում: Շրջակա մուսուլման տիրակալները՝

Բարգուշատի ու Ղարադաղի խաները, 18000-անոց զորքով հարձակվում են հայկական զորքերի վրա: Կապանի Եղվարդ գյուղի մոտ 1723 թվականին Չավնդուրի ճակատամարտումհայերը հաղթանակ տարան: Ազատագրված Կապանը միացավ հայկական իշխանությանը: Հայկական ուժերի կենտրոնատեղի դարձավ Հալիձորի բերդը: Մխիթար Սպարապետի և Տեր-Ավետիսի գլխավորած հայկական զորաջոկատները գրավում են նաև Ձևայի անառիկ բերդը՝ ջախջախելով տեղի մոտ 4000-անոց կայազորը: Մեկ տարի անց՝ մայիսի 29-ին, հայկական զորաջոկատները գրավում են ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Որոտան բերդը:

1722-25 թվականներին՝ երեք տարվա ընթացքում, հաղթահարելով բոլոր դժվարությունները, Դավիթ Բեկը ոչ միայն վտարեց օտարներին ու թշնամիներին, այլև համախմբեց Սյունիքի հայկական մելիքությունները մեկ դրոշի ներքո:

1727 թվականի փետրվարի 26-ին թուրքերը պաշարեցին Հալիձորը: Թուրքական զորքերը, աստիճաններ մոտեցնելով բերդի պարիսպներին, փորձեցին բարձրանալ պարիսպների վրա: Պաշարումը տևում է 6 օր: Վերջին օրը 26 պարսպակործան մեքենաների միջոցով թշնամին գրոհում է բերդը: Հայկական զորքերի դիմադրությունը թուլանում էր: Մարտի 4-ին զորքի հրամանատարությունը որոշում է անցնել վճռական գործողությունների. նրանք վճռում են ճեղքել պաշարումը, դուրս գալ շրջափակումից և անցնել հակահարձակման:

> ***Արիացեք, մի երկնչեք, հետևեցեք մեզ, եթե հասել է մեր վախճանը՝ քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առաջ տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը***
>
> ***Մխիթարի ու Տեր-Ավետիսի կոչը հայ զինվորներին***

Պաշարված ջոկատները, աննկատ դուրս գալով բերդից, հարձակվեցին թշնամու վրա: Խուճապի մատնված թուրքական զորքերը, մեծ կորուստներ տալով, դիմեցին փախուստի: Հալիձորի հաղթանակն օսմանյան բանակների դեմ տարած հաղթանակներից ամենախոշորն ու նշանավորն էր: Թուրքերը կորցրին 13000 զինվոր, 143 մարտական դրոշ, հսկայական տեխնիկա ու ռազմավար:Հալիձորի ճակատամարտից հետո հայերը թուրքական զորքերից ազատագրեցին Կապանը՝ նրանց քշելով Մեղրի: Այն ժամանակ, երբ թուրքերը շարժվում էին դեպի Փոքր թաղ՝ դիմագրավելու հայերի գրոհին, Մխիթար Սպարապետի և Տեր-Ավետիսի ջոկատը

թիկունքից գրոհում է թշնամու վրա: Անակնկալի գալով՝ թուրքերը շարժվում են դեպի Մեղրու կիրճը, որի ելքը դարանակալել էին հայերը: Թուրքերը նախընտրեցին շարժվել դեպի Արաքս և անցնել գետը: Հետապնդելով թշնամուն՝ հայկական զորքերը ազատագրեցին Մեղրին և հակառակորդի դեմ լիակատար հաղթանակ տարան: Հալիձորի և Մեղրիի հաղթանակները ոգևորություն առաջացրեցին հայկական զորքերի մեջ:

Օսմանյան զորքերը կրկին հարձակվում են Սյունիքի իշխանության վրա: Գրոհին դիմագրավելու ժամանակ հայկական զորահրամանատարության շարքերում տեղի ունեցավ պառակտում. Դավիթ Բեկը, ում մելիքները ենթարկվում էին որպես գահերեց իշխանի, ուներ ազնվական ծագում, մինչդեռ Մխիթարը ռամիկ էր: Ուստի Սյունիքի՝ ժամանակի վերնախավի մի մասը սատարում է հոգևորական զորավար Տեր-Ավետիսին: Վերջինս հակված էր թուրքերի հետ հաշտվելու ու հանձնվելու մտքին:1729 թվականի սկզբին, երբ հակառակորդը կրկին պաշարեց Հալիձորի բերդը, Մխիթար Սպարապետը պահանջեց շարունակել պաշտպանությունը և ուժասպառ անել թշնամուն, իսկ Տեր-Ավետիսը նախընտրեց նրանց հետ բանակցելու ուղին: Մխիթար Սպարապետը ստիպված էր գիշերով հեռանալ բերդից: Թուրքերը գրավեցին բերդը, կողոպտեցին ու կոտորեցին հայ բնակչությանը, տղամարդկանց սպանեցին, կանանց վերցրին իրենց հարեմները, իսկ երեխաներին գերեվարեցին: Հալիձորի անկումից հետո Տեր-Ավետիսը հեռացավ Երուսաղեմ՝ ապաշխարհելու, իսկ Մխիթար սպարապետը շարունակեց ազատագրական պայքարը:Մխիթարը միավորեց հայկական ուժերը և թուրքերի դեմ մի շարք հաջող հարձակումներ կազմակերպեց, որի արդյունքում ազատագրվեցին բազմաթիվ
բնակավայրեր: 1730 թվականին, Օրդուբադում թուրքերի դեմ հերթական հաղթանակ տանելուց հետո սպարապետը վերադառնում է Խնձորեսկ: Օսմանյան զորահրամանատար Աբդուլլահ փաշան հաշտվել էր հայկական իշխանության գոյության հետ, և պատրաստվում էր դեսպան ուղարկել Մխիթարի մոտ: Սակայն վերջինս լուր է ստանում, որ Խնձորեսկ վերադառնալու ճանապարհին Մխիթար սպարապետը դավադրաբար սպանվել է հայերի կողմից: Տեղի բնակիչներից ոմանք, վախենալով, որ գյուղը կարող է արժանանալ Հալիձորի ճակատագրին, թուրքերին սիրաշահելու համար գլխատում են Մխիթարին ու գլուխն ուղարկում Թավրիզ:

Սյունիքի ազատագրական պայքարի ելած զորքերը,հետզհետե կազմալուծվելով և միայնակ մնալով թշնամու գերակշիռ ուժերի դեմ,չկարողացան վերջնական հաղթանակ ի հասնել:

Այնուամենայնիվ զինված պայքարի շնորհիվ Սյունիքում և Արցախում որոշակի ժամանակով վերականգնվեց հայկական իշխանությունը:

Եզրակացություն

Այսպիսով,ուսումնասիրելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը Արցախում և Սյունիքում,հնարավոր եղավ կատարել ներոշարադրյալ եզրահանգումները:

Հայ ժողովուրդը մշտապես գտնվելով պատերազմի թատերաբեմում իր մեջ վերջիվերջո ուժ է գտել դիմակայելու,ոտքի կանգնելու,իր ազատության դրոշը պարզելու և միասնաբար հանդես գալու ձգտումով:Հենց սա էլ պետք է ծառայի որպես ազգային արժեքային համակարգ Հայոց պատմության դասին աշակերտի մոտ ձևավորելու գործում:

Ակնհայտ է,որ այսօր մեր ժողովուրդը բախվել է լրջագույն մարտահրավերների և այս պարագայում դժվարացել է ազգային արժեքային համակարգի ձևավորում իրականացնել հայոց պատմության դասերին:Սակային յուրաքանչյուր սխալ և ձախողում իր հերթին մտորումների տեղիք է տալիս,:Կարծում եմ ,որ միասնական

համազգային գաղափարախոսության մշակումը կօգնի խուսափել այդ սխալներից,որպեսզի իմանանք թե ինչ հայեցակետ ունենք

- Ու՞ր ենք գնում
- Ի՞նչ միջոցներով
- Ինչու՞

Աշակերտը պետք է ընկալի ազգային արժեհամակարգի կարևորությունը իր,իր ընտանիքի և իր սեփականության անվտանգության պահպանման տեսանկյունից:Ազգային արժեհամակարգը պետք է յուրաքանչյուր հայի մոտ լինի և մնա որպես գերագույն արժեք:

<<Հայրենապաշտպան դաստիարակութիւն — ահա մեր փրկութեան խարիսխը>>

Գարեգին Նժդեհ

Գրականության ցանկ

1.Հայ ժողովրդի պատմություն,4-րդ հատոր(1972թ.):էջ 168-170
2. Սարգսյան Ա., Հակոբյան Ա. Հայոց պատմություն (Հնագույն շրջանից մինչև մեր օրերը): Ուսումնական ձեռնարկ/ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան. Եր., «Ճարտարագետ», 2004թ:էջ129-133

3. .Հայոց պատմություն. Հիմնահարցեր. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: / Մ.Ա. Կատվալյան, Պ.Հ. Հովհաննիսյան, Լ.Հ. Մկրտչյան և ուրիշներ: Խմբագիր Հր. Ռ. Սիմոնյան. 2012թ: էջ 227-245